ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Հ. ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿԵՆՍԱՔԻՄԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ**
**АРМЕНИИ ИНСТИТУТА БИОХИМИИ ИМЕНИ АКАДЕМИКА Г. БУНЯТЯНА**
**H. BUNIATIAN INSTITUTE OF BIOCHEMISTRY**
**NATIONAL ACADEMY OF SCIENCES**
**REPUBLIC OF ARMENIA**

2450-1.4. – 11
Առ 08.04.2015թ.

# ՀՐԱՎԵՐ

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի 2015 թվականի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու N ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7 ծածկագրով նախատեսված շինանյութերի (այսուհետև՝ Ապրանք): Ապրանքները մատակարարվելու են կից ներկայացված պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագրին համապատասխան:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել քաղաք Երևան Պ. Սևակի 5/1 հասցեով, 2-րդ հարկ, 6-րդ սենյակ՝ Ռ. Զաքարյանին, մինչև 2015թ. Ապրիլի 17-ը՝ ժամը 11⁰⁰-ը:

Հայտերը կբացվեն քաղաք Երևան Պ.Սևակի 5/1 հասցեում 2015թ. Ապրիլի 17-ին՝ ժամը 11⁰⁰-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք **«ԳԱԱԿՔԻ-ՇՀԱՊՁԲ-11/7-15/3»** պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ)

փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Տնօրեն Ս. Չաիլյան

Կատարող՝ Ռ.Զաքարյան
Հեռ. 093-19-99-02

5/1, P. Sevag str., 0014, Yerevan, RA
Tel: (374-10) 28 18 40
Fax: (374-10) 29 73 43
E.mail: schailyan@sci.am

Հավելված թիվ 1
«ԳԱԱԿՔԻ-ՇՀԱՊՁԲ-11/7-15/3» ծածկագրով
շրջանակային համաձայնագրի միջոցով
գնման ընթացակարգի հրավերի

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

« » -ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից N ՀՀ ԳԱԱԿՔԻ-ՇՀԱՊՁԲ-11/7-15/3 ծածկագրով հայտարարծված ընթացակարգի ........ չափաբաժիններին և հրավերի/ծանուցման/ պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

« »-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1. պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2. համատեղ գործունեության կարգով/կոնսորցիումով/ մասնակցության դեպքերի:

« »-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

« » -ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ :

« » տնօրեն՝ _______________

(ստորագրություն)

« » 2015թ.
Կ.Տ.

Հավելված թիվ 1.1
« ԳԱԱԿՔԻ-ՇՀԱՊՁԲ-11/7-15/3» ծածկագրով
շրջանակային համաձայնագրի միջոցով
գնման ընթացակարգի հրավերի

# Գ Ն Ի  Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով **«ԳԱԱԿՔԻ-ՇՀԱՊՁԲ-11/7-15/3»** ծածկագրով հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, ________________________________ առաջարկում է պայմանագիրը կատարել հետևյալ գներով`

| Չափա-բաժինների համարները | Անվանումը | Արժեք* | ԱԱՀ-ն** | Առաջարկված գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| 1 | Ներկ ակրիլային հիմքով 15 լ., 18 հատ, լվացվող, պատերի և առաստաղների համար:<br>Ծածկողականությունը 1 լ. – 6-8 քառ.մ„Ֆեյդալ" կամ համարժեք: | | | |
| 2 | Նախաներկ կոնցենտրատ 10 լ., 5 հատ, ջրով բացվող 1 լ.-5լ. ջուր: Ծածկողականությունը 8-10 քառ.մ, խորաթափանց, „Ֆեյդալ" կամ համարժեք: | | | |
| 3 | Գիպսոնիտ – բաղադրությունը՝ գիպս, պոլիմերային հավելանյութերով, 50 պարկ: Հատկությունները՝ սպիտակ կամ թույլ երանգով, հանքային, ջերմամեկուսիչ, ձայնամեկուսիչ, էկոլոգիապես մաքուր և անվտանգ: Հատիկի չափը՝ ոչ ավել քան 2 մմ.: „Շեն" կամ համարժեք: | | | |
| 4 | Առաստաղ - „Արմստրոնգ" կամ համարժեք, բոլոր ամրացման հարմարանքներով, 115 քառ.մ., 60×60 սմ. չափսերի, երեսպատված պլիխ, հաստությունը՝ 8 մմ.: | | | |
| 5 | Էլ.լույսեր „Արմստրոնգի" կամ համարժեքի համար, 18 վատ: „Լեդ" սպիտակ գույնի, տրամագիծը 215 մմ. 50000 ժամ | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | աշխատունակությամբ, 10 հատ: | | | |
| 6 | Սալիկի սոսինձ մոխրագույն, հանքային, էկոլոգիապես մաքուր և անվտանգ, կայուն եղանակների փոփոխությունների նկատմամբ: Բաղադրությունը՝ քվարցային ավազ, պորտլանդ ցեմենտ, պոլիվինիլացետատային սոսինձ, ցելյուլոզային հավելանյութեր: 100 պարկ, ,,Շեն" կամ համարժեք: | | | |
| 7 | Սալիկի լցանյութ գունավոր, 1 կգ. – 40 հատ: | | | |
| 8 | Ցերեկային լուսատու կորպուսով, 120 սմ. երկարության, 36 վատ, 27 հատ: | | | |
| 9 | Գազի անկյունակ մետաղական 260 սմ. երկարության, 60 հատ: | | | |
| 10 | Պեմզաբլոկ 20×40×10, ,,Շեն" կամ համարժեք, 120 հատ: | | | |
| 11 | Կոսմետիկ ցանց ճաքերի համար, 90 մ. երկարությամբ, 8 հատ: | | | |
| 12 | Սկոչ թղթե ներկարարական, 50 մ. երկարությամբ, 20 հատ: | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 13 | Հղկաթուղթ պատերի համար, 150 համարի – 3 մետր, 180 համարի – 3 մետր: | | | |
| 14 | Պլաստմասե շրիշակների դետալներ – 200 հատ: | | | |
| 15 | Ներկարարի գլանակ, 25 սմ. երկարության, պոչով, Kana կամ համարժեք, 2 հատ: | | | |
| 16 | Վրձին 6 սմ. լայնությամբ, մազերի երկարությունը 6 սմ., 2 հատ: | | | |
| 17 | Պտուտակ 3,5×25, ,,Հիլտի” կամ համարժեք, 1000 հատ: | | | |
| 18 | Ցեմենտ 400 մարկայի, 50 կգ. – 50 պարկ: | | | |

**3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:*
***Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*

Մասնակցի անվանումը և (ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը) (ստորագրությունը)

« » 2015թ.
Կ.Տ.

Հավելված 2
**ՆԱԽԱԳԻԾ**

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐԻ
## N << ԳԱԱԿՔԻ-ՇՀԱՊՁԲ-11/7-15/3>>

ք. Երևան << >> 2015թ.

ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտ ՊՈԱԿ-ն, ի դեմս ինստիտուտի տնօրեն Ս. Չաիլյանի, որը գործում է ինստիտուտի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և <<____________________>> -ն, ի դեմս տնօրեն __________________________յանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված շինանյութերը /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 2/:

**2. Մատակարարման պայմանները**

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 30 աշխատանքային օրվա ընթացքում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

**3. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Սույն պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

**4. Ապրանքի գինը և վճարման կարգը**

4.1 Սույն պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ ______________ (____________) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ հավելված N2-ի վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2015թ. դեկտեմբերի 30-ը:

**5. Ապրանքի որակը**

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

**6. Ապրանքի հանձնումը և ընդունումը**

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ /Հավելված N 5/:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.4 Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

**7. Կողմերի պատասխանատվությունը**

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

**8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/**

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**9. Այլ պայմաններ**

9.1 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

** Եթե գործակալության միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է Գնորդի համաձայնությամբ.

2) Վաճառողն է պատասխանատվություն կրում գործակալի պարտավորությունների համար:

9.5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի` երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները` ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ` բացառությամբ`

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

9.8 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.9 Պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 5 /3 էջ/ հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.10 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան<br>կենսաքիմիայի ինստիտուտ ՊՈԱԿ<br>Ք. Երևան, Պ. Սևակի 5/1<br>Ինեկո բանկ ՓԲԸ,<br>Հ/Հ 205004200874-1001<br>ՀՎՀՀ 00009794<br>Տնօրեն `<br>Ս. Չաիլյան | |
| --------------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ | --------------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ |

Հավելված N 1
N « ԳԱԱԿՔԻ-ՇՀԱՊՁԲ-11/7-15/3»
ծածկագրով գնման պայմանագրի

# ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐԻ
# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| N | ապրանքի ավանումը | չափ. միավ. | քա նակը | տեխնիկական ցուցանիշները, նկարագրությունը |
|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 |
| 1 | Ներկ ակրիլային հիմքով 15 Լ | հատ | 18 | Լվացվող, պատերի և առաստաղների համար: Ծածկողականությունը 1 լ. – 6-8 քառ.մ„Ֆեյդալ" կամ համարժեք: |
| 2 | Նախաներկ կոնցենտրատ 10 լ , | հատ | 5 | Ջրով բացվող 1 լ.-5լ. ջուր: Ծածկողականությունը 8-10 քառ.մ, խորաթափանց, „Ֆեյդալ" կամ համարժեք: |
| 3 | Գիպսոնիտ | պարկ | 50 | Բաղադրությունը՝ գիպս, պոլիմերային հավելանյութերով,: Հատկությունները՝ սպիտակ կամ թույլ երանգով, հանքային, ջերմամեկուսիչ, ձայնամեկուսիչ, էկոլոգիապես մաքուր և անվտանգ: Հատիկի չափը՝ ոչ ավել քան 2 մմ.: „Շեն" կամ համարժեք: |
| 4 | Առաստաղ | քառ.մ | 115 | „Արմստրոնգ" կամ համարժեք, բոլոր ամրացման հարմարանքներով, 60×60 սմ. չափսերի, երեսպատված պվխ, հաստությունը՝ 8 մմ.: |
| 5 | Էլ.լույսեր „Արմստրոնգի" կամ համարժեքի համար, 18 վատ: | հատ | 10 | „Լեդ" կամ համարժեք սպիտակ գույնի, տրամագիծը 215 մմ. 50000 ժամ աշխատունակությամբ, |
| 6 | Սալիկի սոսինձ | պարկ | 100 | Մոխրագույն, հանքային, էկոլոգիապես մաքուր և անվտանգ, կայուն եղանակների փոփոխությունների նկատմամբ: Բաղադրությունը՝ քվարցային ավազ, պորտլանդ ցեմենտ, պոլիվինիլացետատային սոսինձ, ցելյուլոզային հավելանյութեր: „Շեն" կամ համարժեք: |
| 7 | Սալիկի լցանյութ | հատ | 40 | Գունավոր, 1 կգ. |
| 8 | Ցերեկային | հատ | 27 | Լուսատու կորպուսով, 120 սմ. երկարության, 36 վատ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 9 | Գազի անկյունակ | հատ | 60 | Մետաղական 260 սմ. երկարությամբ |
| 10 | Պեմզաբլոկ | հատ | 120 | 20×40×10, ,,Շեն” կամ համարժեք |
| 11 | Կոսմետիկ ցանց ճաքերի համար, | հատ | 8 | 90 մ. երկարությամբ |
| 12 | Սկոչ թղթե | հատ | 20 | Ներկարարական, 50 մ. երկարությամբ |
| 13 | Հղկաթուղթ | մետր | 3 | Պատերի համար, 150 համարի – 3 մետր, 180 համարի |
| 14 | Պլաստմասե շրիշակների դետալներ | հատ | 200 | |
| 15 | Ներկարարի զլանակ | հատ | 2 | 25 սմ. երկարության, պոչով, Kana կամ համարժեք |
| 16 | Վրձին | հատ | 2 | 6 սմ. լայնությամբ, մազերի երկարությունը 6 սմ. |
| 17 | Պտուտակ | հատ | 1000 | 3,5×25, ,,Հիլտի” կամ համարժեք |
| 18 | Ցեմենտ | պարկ | 50 | 400 մարկայի, 50 կգ. |
| *Պարտադիր պայման՝ ապրանքը չպետք է լինի օգտագործված<br>**Ապրանքի տեղափոխումը և տեղադրումը կատարվում է մատակարարի կողմից | | | | |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան
կենսաքիմիայի ինստիտուտ ՊՈԱԿ
Ք. Երևան, Պ. Սևակի 5/1
Ինեկո բանկ ՓԲԸ,
Հ/Հ 205004200874-1001
ՀՎՀՀ 00009794
Տնօրեն `
Ս. Չաիլյան

--------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
N ԳԱԱԿՔԻ-ՇՀԱՊՁԲ-11/7-15/3
ծածկագրով գնման պայմանագրի

# ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐԻ
# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Չ/Հ | Ապրանքի | | | Նախատեսվում է գնել 2015թ. ընթացքում | | | | Ընդամենը հազար դրամ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | քանակը | գինը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | | | 7 | 8 |
| 1 | Ներկ ակրիլային հիմքով 15 լ, | հատ | | | 18 | | | 18 | |
| 2 | Նախաներկ կոնցենտրատ 10 լ , | հատ | | | 5 | | | 5 | |
| 3 | Գիպսոնիտ | պարկ | | | 50 | | | 50 | |
| 4 | Առաստաղ | քառ.մ | | | 115 | | | 115 | |
| 5 | Էլ.լույսեր „Արմստրոնգի” կամ համարժեքի համար, 18 վատ: | հատ | | | 10 | | | 10 | |
| 6 | Սալիկի սոսինձ | պարկ | | | 100 | | | 100 | |
| 7 | Սալիկի լցանյութ | հատ | | | 40 | | | 40 | |
| 8 | Ցերեկային | հատ | | | 27 | | | 27 | |
| 9 | Գազի անկյունակ | հատ | | | 60 | | | 60 | |
| 10 | Պեմզաբլոկ | հատ | | | 120 | | | 120 | |
| 11 | Կոսմետիկ ցանց ճաքերի համար, | հատ | | | 8 | | | 8 | |
| 12 | Սկոչ թղթե | հատ | | | 20 | | | 20 | |
| 13 | Հղկաթուղթ | մետր | | | 3 | | | 3 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 14 | Պլաստմասե շրիշակների դետալներ | հատ | | | 200 | | | 200 | | |
| 15 | Ներկարարի գլանակ | հատ | | | 2 | | | 2 | | |
| 16 | Վրձին | հատ | | | 2 | | | 2 | | |
| 17 | Պտուտակ | հատ | | | 1000 | | | 1000 | | |
| 18 | Ցեմենտ | պարկ | | | 50 | | | 50 | | |
| Ընդամենը | | | X | | | | | X | | |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան
կենսաքիմիայի ինստիտուտ ՊՈԱԿ
Ք. Երևան, Պ. Սևակի 5/1
Ինեկո բանկ ՓԲԸ,
Հ/Հ 205004200874-1001
ՀՎՀՀ 00009794
Տնօրեն՝
Ս. Չաիլյան

--------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
N ԳԱԱԿՔԻ-ՇՀԱՊՁԲ-11/7-15/3
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| N | Ապրանքի անվանումը | Ֆինանսավորման գումարը 2015թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներից ըստ եռամսյակների՝ ընդ որում | | | | Ընդամենը /հազ. դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|
| | | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Ներկ ակրիլային հիմքով 15 լ, | | 100% | | | 100% |
| 2 | Նախաներկ կոնցենտրատ 10 լ , | | 100% | | | 100% |
| 3 | Գիպսոնիտ | | 100% | | | 100% |
| 4 | Առաստաղ | | 100% | | | 100% |
| 5 | Էլ.լույսեր „Արմստրոնգի” կամ համարժեքի համար, 18 վատ: | | 100% | | | 100% |
| 6 | Սալիկի սոսինձ | | 100% | | | 100% |
| 7 | Սալիկի լցանյութ | | 100% | | | 100% |
| 8 | Ցերեկային | | 100% | | | 100% |
| 9 | Գազի անկյունակ | | 100% | | | 100% |
| 10 | Պեմզաբլոկ | | 100% | | | 100% |
| 11 | Կոսմետիկ ցանց ճաքերի համար, | | 100% | | | 100% |
| 12 | Սկոչ թղթե | | 100% | | | 100% |
| 13 | Հղկաթուղթ | | 100% | | | 100% |
| 14 | Պլաստմասե շրիշակների դետալներ | | 100% | | | 100% |
| 15 | Ներկարարի զլանակ | | 100% | | | 100% |
| 16 | Վրձին | | 100% | | | 100% |
| 17 | Պտուտակ | | 100% | | | 100% |
| 18 | Ցեմենտ | | 100% | | | 100% |

*վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ԳՆՈՐԴ ՎԱՃԱՌՈՂ

ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան
կենսաքիմիայի ինստիտուտ ՊՈԱԿ
Ք. Երևան, Պ. Սևակի 5/1
Ինեկո բանկ ՓԲԸ,
Հ/Հ 205004200874-1001

ՀՎՀՀ 00009794
Տնօրեն `
Ս. Չաիլյան

--------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված 4*

**«ԳԱԱԿՔԻ-ՇՀԱՊՁԲ-11/7-15/3»** *ծածկագրով ընթացակարգի հրավերի*

*ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի*

*ինստիտուտ ՊՈԱԿ-ին*

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ , «ԳԱԱԿՔԻ-ՇՀԱՊՁԲ-11/7-15/3»

*ք. Երևան* *“_____”_________2015թ.*

_________________________________ - *ն, ի դեմս Ընկերության* _____________________ *-ի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա* (այսուհետև Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

## 1. *Համաձայնության առարկան*

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է **“Գնումների աջակցման** կենտրոնե պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ Կենտրոն)կողմից կազմակերպված՝ ,Համակարգչային և պատճենահանման սարքավորումներ և օժանդակ նյութեր >> , **«ԳԱԱԿՔԻ-ՇՀԱՊՁԲ-11/7-15/3»** ծածկագրով ընթացակարգին, պետք է ներկայացնի ընթաց**ակարգի հ**այտի ապահովում և ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Կենտրոնի կողմից կազմակերպված <<վառելիքի ձեռքբերման>> , **«ԳԱԱԿՔԻ-ՇՀԱՊՁԲ-11/7-15/3»** ծածկագրով ընթացակարգին ընկերության մասնակցելուց բխող՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և ընթացակարգի հրավերով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Ընկերությունը Պատվիրատուն վճարում է տուժանք ______________ ( ) ՀՀ դրամի չափով:

1.1.2 Պատվիրատուն՝ իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որն Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուն, առանց նախնական պահանջ ներկայացներու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել **համապատասխան** գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի **սահմաններում,** Ընկերությանը սպասարկող ___________________________ բանկում կամ ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով__________________________________ -ն հանձնարարում է ___________________________ բանկին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին,սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում *ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտ ՊՈԱԿ* առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

## *2. Այլ պայմաններ*

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է Գործակալության կողմից , **«ԳԱԱԿՔԻ-ՇՀԱՊՁԲ-11/7-15/3»** ծածկագրով կազմակերպված ընթացակարգի իրավերի վավերականության ընթացքում:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Կենտրոնի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում լուծվում են դատական կարգով:

*Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները*

______________________________________________

*Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)*

_____________________________________________

*հասցեն*

____________________________________________

*բանկ*

_*Հ/Հ*_____________________________________________

__*ՀՎՀՀ*___________________________________________

_______________________________________________

*Ընթացակարգի մասնակցի ղեկավարի պաշտոնը,անունը,ազգանունը*

______________________________________________

*Ընթացակարգի մասնակցի գլխավոր հաշվապահի անուն,ազգանուն*

________________________________________

*ստորագրություն*

*Կ.Տ.*

Հավելված 5
«ԳԱԱԿՔԻ-ՇՀԱՊՁԲ-11/7-15/3»
ծածկագրով գնման պայմանագրի

| Վաճառող | Գնորդ |
|---|---|
| ______________________________ | ______________________________ |
| ______________________________ | ______________________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ______________ |
| հհ _________________________ | հհ___________________________ |
| ______________________________ | ______________________________ |
| հվհհ _______________________ | հվհհ________________________ |

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<_____>> <<____________________>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ ____________________________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<__________________>> 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Գնորդը՝ ի դեմս _______________________ և Վաճառողը՝ ի դեմս________________________, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ մատակարարումներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալ մասին.

Պայմանագրի շրջանակներում Վաճառողը __ _________ 20___թ-ից __ _________ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշը | Մատակարարումներ ի ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամա-նակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը | | | | |

Վերոհիշյալ ապրանքների մատակարարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Հանձնեց | Ընդունեց |
|---|---|
| ______________________________ | ______________________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________________ | ______________________________ |
| Ազգանուն, Անուն | Ազգանուն, Անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |